ամէն երևելի ճեմարաններուն անդամ կ'ընտրուի, Տանիմարքայի թագաւորէն ազնուականութեան հրովարտակ կ'առնէ, Պաղեստացւոց հիմակուան թագաւորէն Պ. զատական ասպետութիւնը, ուրիշներէն ալ ուրիշ ասպետութիւններ կ'ընդունի, և անունը բոլոր աշխարհք կը տարածուի։

Փորագրած արձաններուն մէջ խիստ անուանիներէն մէկ քանին յիշենք. Պ. րէս, Պ. գոն, երեք Շ. ընորհք, Մ. ուսայք, Պ. քիւլլէս, Հերմէս. ասոնք ինչուան չորս չորս անգամ մարմարիոնի վրայ փորուեր են, անոնցմէ զատ՝ սուրբ Պ. ստուածածին մը Յիսուս գիրկը՝ Լ. ափոլլի համար. Վ. ըիստոս և տասուերկու առաքեալք՝ Վ. ոփէնհակէնի մայր եկեղեցւոյն համար. Պիշեր և Յորեկ՝ անձնաւորած՝ Կուիրինեան պալատին համար. Պիոս Է. պապին մահարձանը՝ Հռոմայ սրբոյն Պետրոսի եկեղեցւոյն համար. Փոնեաթովսքի իշխանին մահարձանը՝ Ա. արշաւի համար. Կութթէմպերկի արձանը՝ Մակոնցայի համար. և մեծին Պ. ղեքսանդրի յաղթանակով Բաբելոն մտնելուն մեծ ու փառաւոր բարձրաքանդակը որ Լ. ափոլէոնին հրամանովը սկսեր էր շինել; և հիմա Վ. ոփէնհակէնի թագաւորական պալատին մեծ սրահին մէջն է։

Մորվալտսէն ինչուան իր կենաց ետքի վայրկեանն ալ բանելու հետ էր. մեռնելու օրուանը առաւօտը Հերակլի արձանի մը ուրուագիծը շիներ էր, և թէատրոն երթալէն քանի մը վայրկեան առաջ՝ ուրիշ արձան մը պատրաստելու վրայ էր։ Մէյմէն ալ յանկարծ թէատրոնին մէջ կաթուածի պէս հիւանդութիւն մը եկաւ վրան, ու ինչուան որ տունը տարին նէ մեռաւ 73 տարեկան։ Չորս միլիոն ֆրանքէն աւելի ստակ ելաւ քովէն, որ բոլորն ալ կտակով թողուցեր էր Վ. ոփէնհակէնի թանգարանին, որ ինքը հիմներ էր։

Շատ փառաւոր թաղում ըրին Տանիմարքացիք աս անմահ յիշատակաց արժանի քանդակագործին, որ իրենց ազգին ու աշխարհին անունը այնչափ պայծառացուցեր էր։ Մ. ագաւորէն սկսած՝ 2500 մեծամեծներ, հազարաւոր ուսումնականներ ու անթիւ ժողովուրդ ներկայ գտնուեցան հանդէսին, և մարմինը թագաւորական ճեմարանէն ինչուան Պ. ստուածածնայ եկեղեցին տարին, անկէ ալ մասնաւոր մատրան մը մէջ փոխադրեցին։ Մեծ մխիթարութիւն է այսպիսի կարգէ դուրս հանճարաւորին յարգը գիտցողներուն աս բանս որ Մորվալտսէն իր արձանն ալ փորեր է՝ բարձրութիւնը 20 մատնաչափ, յուսոյ խարսխին վրայ կոթընած։

Ինչափ է Մորվալտսէնի արձաններուն բնականութիւնն ու պարզութիւնը, որ միայն Վանովային արձաններուն հետ կրնան բաղդատուիլ։ Վանովան ինքը մեծ համարում ուներ Մորվալտսէնին վրայ, և տարակոյս չկայ որ իր փորուածքներուն փափկութեանը կողմանէ անկէ շատ վեր է. բայց Մորվալտսէնն ալ Վանովայէն վար չմնար, կ'ըսեն, իր արձաններուն ուժին ու բնականութիւնը կողմանէ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ունեցած չարիքներդ մէյմէկ բարիք սեպէ, և ուրախ կ'ըլլաս։

Նայէ որ ուրախութեանդ մէջ տրտմութեան երակ մը ըլլայ, և տրտմութեանդ մէջ ուրախութեան երակ մը։

Ճիշտ կրնար ըսել թէ գոհ է. — գոհ կ'ըլլամ ըսէ, կ'ազատիս։

ԹՈՄՄԱՍԷՈՍ

ՎԵՆԵՏԻԿ · Ի ՏՊԱՐԱՆԻ Ս · ՂԱԶԱՐՈՒ